

ՆՐԱՆԵՐԻ ՄԵԿԵՆՈՐԻ ՏԱՐԻ

ՄԱՍԻՍ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Маскъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաւօրեայ օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է լ է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ջրաբանական կարեւորութիւնը. — Ներքին Տե-
ստորութիւնը. Նոր Գեղարք. Նամակ Ղազարեց.
Նամակ խմբագրութեան. Ներքին խմբագրութեան.
ՏԱՌԻՆ ՏԵՍՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ. — ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՍ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Թիւրքաց հայերի կրթական վիճակը.

ՋՐԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

Մեր երկրում մինչև այժմ դեռ չեն վե-
րականացրած այն բոլոր բնական ջրերը,
որոնք մի ժամանակ բարեղին քաղաքներ
և գիւղեր են եղել և որոնք երկրագործ-
ութիւնը, արհեստը և առևտուրը ծաղ-
կած վիճակի մէջ են եղել Այդպէս են,
օրինակ, Սուրմալուի գաւառի շատ տեղեր,
որոնք գտնվում են Արարատի շուրջը,
սահմանագծի մօտ, այդպէս են Արաքսի
աւազանի ստորին հոսանքի մօտ գտնվող
տեղերը, Մուղանի և Միլի անապատների
որոշ մասերը.

Բնական վերականգնելու խոշոր
հանգիստացի է գլխաւորապէս այն հան-
գումները, որ շատ տեղերում ջուր չը կայ
թէ խմելու և թէ գիւղատնտեսական կա-
րիքների համար: Մինչդեռ, երբ ուսում-
նասիրում էք հնութեան հետքերը, դուք
տեսնում էք, որ նոսրիկ ժամանակներում
գոյութիւն են ունեցել առուներ կանոնա-
ւոր շինված բաղնիքով ճիւղաւորութիւն-
ներով: Մեծ-Մասիսի ստորոտում գտնվող
աւազանները ցոյց են տալիս, որ այդտեղ
եղել է կանոնաւոր ջրաբանութիւն, մինչ-
դեռ այժմ ջրի կատարեալ բացակայու-
թիւն է:

Հին կովկասեան և ասիական ազգերը
հմուտ էին ջուր գուրս բերելու արհեստի

մէջ և գիտէին որաւ ու ժողովել թէ
ստորերկրայ ջրերը և թէ առուներով
ջուր բերել հեռաւոր ջրամբարներից: Ներ-
կայումս կովկասում գտնվող առուների
մեծագոյն մասը, մեր հարեան Պարսկաս-
տանի ջրաբանական ցանցը հետևանք են
այն գործնական գիտութեան, որ ունի
Արեւելքը ջրհանութեան վերաբերութեամբ:
Նոր առուներ և փոքր ի շատ խոշոր
ջրաբանական ձեռնարկութիւններ հա-
մարեա գոյութիւն ունեն և սակաւթիւ
եղածները դեռ չեն ցոյց տուել շոշափելի
գործնական արդիւնքներ:

Ռուսաստանի համար հողերի ոռոգումը
նորութիւն էր, որովհետև հիւսիսը ա-
ռանձին անհրաժեշտութիւն ունէր ոռոգ-
ման և կարողանում էր առաջ տանել իր
գիւղատնտեսական արդիւնագործութիւնը
առանց ջրաբանական ցանցի: Երբ Ռու-
սաստանը մօտեցաւ հարաւին, երբ նա
սկսեց դուրս գալ այնպիսի երկրների
հետ, որոնք առանց ոռոգման չեն կարող
առաջ տանել իրանց գիւղատնտեսութիւնը,
այն ժամանակ նա իրան սփռված գոյաց-
ուղաբանութիւն դարձնել և այդ նոր հան-
գումների վրա: Կարևոր էր պահպանել
եղած ջրաբանական ցանցը, միջոցներ
ձեռք առնել ընդարձակելու այդ ցանցը,
ուսումնասիրել այն յարաբերութիւնները,
որոնք գոյութիւն ունեն գործնական վիճա-
քում ջրից օգտվելու հարցի վերաբերու-
թեամբ և օրէնսդրական կերպով կանոնա-
ւորել այդ յարաբերութիւնները, սահ-
մանելով իրաւունքի և պարտաւորութիւն-
ների շրջանակները:

Այդ ուղղութեամբ սկսած գործունէու-
թիւնը դեռ նոր է սկսել ազդել կեանքի
վրա և շոշափելի դրական հետևանքներ
դնել չէ: Թայե ինչ-որ մի խոշոր քայլ ար-
դէն արված է: Զրային օրէնսդրու-

թիւնը, որ գործում է տանն տարուց ա-
ւելի, որքան էլ թերի և պակասաւոր լինի,
այնու ամենայնիւ նա անհրաժեշտ մաս-
նիկն է այն կանոնաւոր կազմակերպու-
թեան, որ պէտք է ստանայ ջրաբանա-
կան գործը մեր երկրում:

Միւս անգամ կը խօսեմ այն նոր քա-
ղերի մասին, որոնք ծրագրված են ջրա-
բանական գործը կանոնաւորելու համար
և այն կարիքների մասին, որոնք պէտք է
նկատի առնվին գործի արդիւնքները ա-
պահովելու նպատակով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՏԱՐԱՐՈՒՆ

ՆՈՐ ԳԵՂԱՐՔԻՆ

Վնեստիկի Միթրաբեան տպարանից լոյս
տեսաւ «Գեղարք», 1903, №№ 1—10, միա-
սին կազմած:

Դա մի մեծ գիրք է, «Գեղարք» սովորա-
կան գիրքով, բաղկացած 10 թերթից (80 է-
րես, իւրաքանչիւր երեսը երեք սիւնակից):
Ամենից շատ, ի հարկէ, ուշադրութիւն գրա-
ւում է այդ գեղարքաւորական հրատարակու-
թեան արտաքինը «Գեղարք» արդէն ծանօթ
է ուսանողներին Ռայց այս նոր համարը բո-
լորովին ուրիշ բան է իր չեղութեամբ: Մի-
թրաբեան տպարանը ոչինչ չէ խնայել այդ հրա-
տարակութիւնը զարդարելու համար: Կարելի
է ասել, որ հայերի մէջ դեռ չէ տեսնված մի
գեղարքաւորական արժանի է այն «Գեղարք»:
Կազմը ստուար թղթից է, զարդարված սքան-
չելի նկարով: Գրքի մէջ եղած պատկերների
թիւը հասնում է 70-ի: Առանձին ուշադրու-
թիւն են դրանում երեք մեծ պատկերներ, ո-
րոնք դրված են գրքի մէջ. 1) «Մարտիկի Սան-
դուխտ», սքանչելի մի տպագրութիւն՝ ղեկա-
ղանակական ոճով. 2) «Աւարտի Դիւցազներէ»
— Վարդան Մամիկոնեանի, Ղևոնդ Երեցի ծա-

նօթ պատկերը, տպված երեք գոյնով, 3) «Ալի-
շան, Նազարեան, Արմաշեան, Բաքի, Ռ. Պատ-
կանեան», տպված նոյնպէս երեք գոյնով: Երեք
գոյնով են տպված և «Միթրաբեան միաբա-
նութիւն» և «Ալեւոյն պատկերները: Շատ հե-
տաքերական է և միւս պատկերների մեծա-
մասնութիւնը: Այդպէս մենք տեսնում ենք մի
շարք տեսարաններ Պարսկաստանի հայերի
կեանքից (զպրոցներ, աշակերտական խմբեր,
հանդէսներ, հարսանիք, թիւրքաւայ գաղթու-
կաններ Պարսկաստանում), կովկասեան հայ
կանանց տեղական տարազներ և այլն: Կայ
ճշանակաւ Ազգայինը՝ հաւաքական պատկերը,
բաղկացած 50 միմյանուր նկարներից. այդ-
տեղ են ուսանող և թիւրքաւայ նշանակող
գործիչները: Խմբագրութիւնը ջանք չէ խնա-
յել, որ այդ պատկերների մէջ արտայայտված
լինեն հայկական կեանքի բազմաթիւ կողմերը:
Շատ պակասաւոր է միայն թիւրքաւայերի
կեանքի արտայայտութիւնը: Հետաքրքրական
է «Մասունցի» հերոսուհին կը գահավիժի
պատկերը: Այդտեղ ներկայացրած է մի կին,
որի մէջից կտրված է հրացանը և որ գրկած
իր երեխային՝ ժայռից ցած է զրոյթում: Դէպ-
քը վերցրված է 1894-ի կոտորածներից:

Խմբագրութիւնը զանգատում է, որ հայ
նկարիչները քիչ օգնեցին իրան: Եւ դա, իսկ
որ, նկատելի է: Հայկական կեանքն ու հայո-
քան տեղերի տեսարանները աւելի բազմա-
կողմանի և հետաքրքրական կը լինէին, եթէ
հայ նկարիչները արդիւնքներ խմբագրութեան:

«Հեռուէն», մեր այս կղզիացեալ միջավայ-
րէն, որչափ հնար էր Հայկական Պատկերա-
գրքի թերթ մի հասցնել Հայաստանի, ահա
ներկայ «Գեղարք» թող երաշխաւոր ըլլայ
այդ կարեւորութեան, —ասում է խմբագրու-
թիւնը: Եւ պէտք է խոստովանել, որ «Գե-
ղարք» խմբագրութիւնը միանգամայն փայ-
լուն կարողութիւն է ցոյց տուել մի շքեղ
պատկերագրող, իսկական գեղարքաւորական

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻՒՐԿԱՆ ՀԱՅԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Վաղուց մենք ոչ մի տեղեկութիւն չունէինք
Թիւրքիայի ամբողջ հայ ժողովրդի կրթական
վիճակի մասին: Հայկական աղետներից յետոյ
Թիւրքիան փակեց իր դռները որ և է հետա-
զօտութեան առաջ և մենք այն կարծիքի էինք,
թէ այդ պետութեան հայաբնակ գաւառները
բոլորովին դուրի են կրթական որ և է հա-
տատութիւններից:

Սակայն վերջերս Կ. Պոլսի հայոց պատրիար-
քարանը հրատարակեց երեք տեղեկագիր, պատ-
րաստված ազգային կենտրոնական վարչու-
թեան ուսումնական խորհրդից, «Վիճակացոյց
ազգային վարժարանաց Թիւրքիոյ վերնագրով»:
Այդ վիճակացոյցներից երկուսը պատկերացնում
են գաւառների ազգային վարժարանների, իսկ
մէկը Կ. Պոլսի հայոց թաղային վարժարան-
ների դրութիւնը առ 1-ն յունվարի 1903:

Տեսնենք թիւրքահայերի կրթական վիճա-
կը վիճակացոյցների համաձայն: Ուսում-
նասիրենք առաջ մայրաքաղաքի, Կ. Պոլսի
հայոց վարժարանների վիճակը:

Ի Կ. Պոլսի դպրոցն էր
Կ. Պոլսի 40 հայաբնակ թաղերի մէջ նշա-
նակված է 40 վարժարան, ուրեմն ամեն մի
թաղում մի վարժարան: Այդ վարժարանները
բաղկացած են ընդհանրապէս երեք բաժան-
մունքից—1) մասն կապարտէշ կամ ծաղ-
կոց մի տարվայ դասընթացով, 2) տարրական
դասընթաց՝ Ա. և Բ. տարի, 3) միջին դաս-
ընթաց՝ Ա. և Բ. տարի: Ուրեմն Կ. Պոլսի
հայոց թաղային վարժարանները նոյնն են, ինչ
որ մեր մէջ 4-ամսեայ դասընթացով երկդաս-
րանեան դպրոցները, չը հաշուելով, ի հարկէ,
ծաղկոցը, կամ նրանք, որոնք իսկապէս տարրա-
կան, սկզբնական դպրոցներ են: Սակայն այդ վար-

ժարաններից 14 հատը, այն է Գուս-Գափուի
«Սուսուրյան» վարժարանը, Կէտքի-Փայաի
«Մեհրապեան», Սամաթիայի «Սահակեան»
և «Վարդանեան», Գաղլի-Ձէշմէի «Ազգային»
Սուրբ Փրկչի որբանոցը, Մաքրիքէյի «Տա-
տեան», Բերա-Թագրոմի «Եսսեան», Դաւա-
թիայի «Ս. Լուսաւորեան», կամ «Եննտօրեան»
կանը, Պէշքէշի «Մարտիրոսեան», Օրթա-
քէյի «Ս. Թարգմանչաց-Հոփիսեան» և Գու-
րու-Ձէշմէի «Ս. Թարգմանչաց», իսկ Լուսա-
րեանից էլ «Եսսեան»-էրանեանը, իսկ Լուսա-
րեանից էլ «Ս. Խաչ»-ը, իւրեւրտար-Պաղարաշ-
քի «Ճեմարան-Վարժարան» և Գաւառքէյի
«Արտեան», ունեն և բարձրագոյն դասընթացը

1 կամ 2 տարի բաժանմունքով: Ուրեմն հաշ-
ւելով և ծաղկոցը, լրիւ ուսումնական ամբողջ
դասընթացը 7 տարի է լինում: Դժբաղդաբար,
վիճակացոյցը չէ հաղորդում, թէ այդ 7 կամ
իսկապէս 6 տարվայ ընթացքում ուսման ինչ
պաշար կամ ինչ քանակութիւն է աւանդվում
աշակերտին: Յամենայն դէպս, այս պարզ է,
որ Կ. Պոլսի «Եննտօրեան» կոչված դպրոցը,
բաղկացած լինելով 2 պատրաստականից, 2
միջին և 2 բարձր դասարանից, դժուար թէ
կարողանայ 6 տարվայ ընթացքում աւանդել
իր սաներին այն, ինչ որ մեզ մօտ աւանդում
են հոգեւոր թմական դպրոցները, այնպէս որ
պէտք է դալ այն եղրակցութեան, որ Կ.
Պոլսի հայոց թաղային վարժարանը, այն ևս
բարձրագոյն դասընթացը ունեցող վարժարանը
ուսման ծաւալով հազիւ հաւասար լինի պրօ-
գրիմալիայի կամ մեր նախկին 4-դասարանեան
դպրոցների ծաւալին:

Սակայն բոլոր այդ 40 վարժարանները աչքի
են ընկնում նրանով, որ երկուսն են, այսինքն
մի և նոյն դպրոցի մէջ զետեղված են տղայի
և աղջկանց վարժարաններ, կամ ամեն մի
վարժարան բաղկացած է երկու բաժանմուն-
քից—տղայոց և աղջկանց: Եթէ հաշուելու լի-
նենք զատ դատ, պէտք է ընդունենք ուրեմն
80 վարժարան, ամեն մի թաղում երկուսը,
տղայոց և աղջկանց:

Այդ երկուսն 80 վարժարանների մէջ ուսա-
նում են տղայ—3060, աղջիկ—2359, համա-
գումար 5419, որոնցից 1777 հոգի ձերբակալ
Ուսուցիչների թիւն է—194, վարժուհիների—
111, համագումար 305: Բոլոր այդ 80 վար-
ժարանների վրա ամսական ծախք է լինում
82865 դուշ, իսկ այդ գումարը կամ հասոյթը
ստացվում է հետեւեալ կերպով.

- 1) Եկեղեցիների նպաստ . . . 49318 դուշ
- 2) Աշակերտների թոշակ . . . 29975 »
- 3) Խուլներ . . . 8571 »

Բացի ազգային թաղային վարժարաններից,
պետական, այն է թիւրքական և զանազան օ-
տար վարժարաններում ևս սովորում են հայ
ուսանողներ և ուսանողուհիներ, թուով 1823,
այն է. 1) պետական վարժարաններում 215
տղայ և 160 աղջիկ, 3) հայ-կաթօլիկ և հայ-
բողոքական—280 տղայ, 195 աղջիկ, 4) օտար-
ազգի վարժարաններում—188 տղայ և 280 աղ-
ջիկ, որով բոլոր հայ աշակերտների թիւը լի-
նում է 5419+1738=7157:

Ս. Փրկչի որբանոցի մէջ բացի ուսումից ա-
շակերտները սովորում են զանազան արհեստ-
ներ—կոշակարութիւն, դերձակութիւն, կա-
նազործութիւն, աթոռաշինութիւն, ոտաւախա-
նութիւն, իսկ աղջիկները—կար, ձեռագիրու-
թիւն, ասեղնագործութիւն և գորգագործու-
թիւն:

Տեղեկագիրը պարտաւորում է և բաղդատա-
կան վիճակացոյց Կ. Պոլսի հայոց թաղային
վարժարանների 1897, 98, 99, 1900, 1901,
1902 և 1903 տարիների համար:

տղայ-աղջիկ	ուսուցիչ-վարժուհի ամս. ծախք		
1897 թ.	3765	199	85,383 դուշ
1898 »	4883	249	63,953 »
1899 »	4923	274	77,300 »
1900 »	5351	292	83,556 »
1901 »	5613	310	82,915 »
1902 »	5376	298	83,915 »
1903 »	5419	305	82,865 »

II ԳԱՎԱՐՆԵՐԻ ՎԱՐՇԱԿԱՆ ԴԱՐՇԱՆԵՐԸ

Տեղեկութիւններ կամ վիճակացոյցներ հրա-
տարակված են 61 գաւառների համար, որոնց
միաժամանակ պէտք է ընդունել և իբրեւ 61
առաջնորդութիւն Առաջին անգամ լինելով,
որ մեզ անթիւ է տրվում ծանօթանալու Փոքր
Ասիայի հայ ազգաբնակչութեան կրթական վի-
ճակի հետ, մենք անհրաժեշտ ենք համարում
ծանօթացնել մեր ընթերցողներին ամբողջ 61
գաւառների վիճակացոյցների հետ:

Այդ 61 գաւառները կամ առաջնորդական
վիճակներն են—Արրիանտապոլիս, Բոքոսթո,
Նիկոմիդիա, Պիլէծիկ, Կաւսիւս, Զմիւռնիա,
Գաղատիա, Սղերտ, Կեսարիա, Ամասիա—Մար-
դուան, Շապին-Գարահիսար, Զանդի, Տրապի-
զոն, Կարին, Բդի, Բաքերդ, Տիւրպէթեր, Խա-
րբըզ, Ակն, Զալկաձազ, Արաբկիր, Զարաւ-
նազ, Նեքսիա, Պարտաւ, Այնթաք, Անտիոք,
Հալէպ, Եօղզաւ, Հաճն, Կիւրին, Զէյթուն,
Տօրնտէ, Տիւրքիկ, Պրուսա, Պալոքսէր—Պան-
տրա, Աքաւսիա, Նեքսիա, Բաղէշ, Նըզկա,
Կամախ, Պալաւիտ, Մուշ, Վան, Լիւն և Կոտեց
անապատներ, Աղթամար, Դերջան, Սպեր-Կիւ-
կիւ, Բասէն, Մնուս, Տիգրանակերտ, Բալու,
Գաւաթեմուն, Գոնէա, Արմաշ, Նեքսիա, Կիւ-
րոս, Բուլքարիա, Սիւս և չընկալալ, Ատանա,
Մալաթիա և Մարաշ: Նրանց մէջ կան.

- 1) Վարժարաններ, երկուսն . . . 818
- 2) Աշակերտներ . . . 60815
- 3) Աշակերտուհիներ . . . 22380
- 4) Ուսուցիչներ . . . 1597
- 5) Վարժուհիներ . . . 556
- 6) Ամսական ծախք . . . 362967 դւ.

Դժբախտաբար, տեղեկագրի մէջ չէ ամսված
թէ այս 818 վարժարաններ լինչ տեսակ են,
տարրական, թէ միջին. յիշեցնում է միայն, այն
ևս ոչ ամենքի համար, թէ Ա. Բ. Գ. Դ. Ե. և Զ.
դասընթացը ունեն: Պէտք է ենթադրել, որ
դասընթացը մի տարվայ ուսումն է նշանա-
կում, հետեւաբար Ա կամ Զ դասընթացը ա-
նելով, պէտք է հասկանալ, որ վարժարանը 1

որ արտայայտվել է թէ՛ գիտնական լուրջ աշխատութիւններով և թէ՛ անտառային գործի համար գեղեցիկ կերպով նախապատրաստված մի քանի սերունդներ տալով Թող աւելի երկար տարիներ շարունակվել ինստիտուտի աշխատանքը յօդուտ ունենալով գիտնական հետազոտողները և ինստիտուտի վարչութիւնի հետեւող բովանդակութիւնը: «Կովկասեան Կայսերական Գիտությունների ակադեմիայի» ակադեմիկոսները, որոնք ինստիտուտի անտառային ինստիտուտի գլխավոր գիտնականն էր, անկեղծօրէն ակնարկելով և ցանկանալով նրան գիտութեան և ինստիտուտի ժողովուրդների լուսաւորութեան ասպարէզում:

Թիֆլիսի բուսական այգում գերեզմանի և միւս ծառայողների համար բնակարաններ շինելու նպատակով, երկրագործութեան և պետական կառավարչների միջնորդութեամբ յատկացրել է 32,000 ռուբլի: Բնակարանները կը շինվեն Սոբոլևի օտարի վրա:

«Одес. Нов.» լրագիրը հաղորդում է, որ Բիշկէնկի օտարկանապետ Ստանիսլավ Թոմշովսկի է իր պաշտօնը:

«Кавказ» լրագրում կարդում ենք. «Քնկաւ անհետկ, որ կովկասեան կառավարչապետ Իլյան Գալիցին առաջիկայ յուրի ամսի առաջին թւերին պէտք է ուղարկել ղեկի Բէլի-Կիւլի, ուր, զուգահեռ և անցկացնել ամառային ամբողջ սեզոնը, Թիֆլիսի նահանգապետ ամառային Թիֆլիսի գաւառապետին անյապաղ հոգալ Բէլի-Կիւլի ճանապարհը կանոնաւորելու մասին:

«Тифл. Листок» լրագիրը հաղորդում են Պետերբուրգից, թէ Անդրկովկասում գիւղական հողային բանկի բաժանմունք բանալու հարցը վճռված է դրական կերպով: Այդ բաժանմունքը, լուրերին նայելով, պէտք է բացվի 1904 թ. ականին:

Նոյն լրագիրը հաղորդում են, որ երկրագործութեան և պետական կառավարչների միջնորդութեան մէջ վերջացել է կովկասեան գիւղացիների հողային գործերը կարգաւորելու նպատակով առանձին մասնաժողովի կազմած հրահանգի ձեւով:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Պետերբուրգի կառավարչութիւնները ցոյց են տալիս, որ Շուշին 40,000 ռուբլի ապառիկ ունի զանազան քաղաքային և պետական հարկերի, որոնք հաւաքված են եռանդուն կերպով Նոյն պատեան նույն ժամանակ ամառային մեզ ցոյց է տալիս, որ մի քանակ Նախակոված է 9 կոպէկ ֆունտին, բայց մեզ վրա ծախում են 11 կոպէկով: Երևի մասնաժողովը պատժում են ժողովրդին, որ նա յանդգնել է 40,000 ռ. ապառիկ պահելը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Բժիշկ Աբ. Բաթանեան, որ երկու տարի Մոսկովայի համալսարանի տեղապահութեան կլինիկայում աշխատել է իբրեւ ինտերն-օրդինատոր և մէկ տարի էլ Օրոն-Սոսկոկի հիւանդանոցում, մայիսի 10-ին, զինւորական բժշկական ձեւադրա՛նում գիտնական էր պաշտպանում բժշկապետի կոչում ստանալու: Նրա ընտրել էր նա իր աշխատութեան համար Եփաղոյտ հազի բարդուն և նրա պատճառած կոտորածը: Զեւարանի կողմից նշանակված ընդդիմախօսներ էին պրոֆ. Գուրգոբին, Սկորինին և արիվատ-նոցնետ Լիպսկի: Այդ օր 5 հոգի էին պաշտպանում իրանց գիտնականները: Դահլիճը լիքն էր հանդիսականներով: Պ. Բաթանեան արժանացաւ բժշկապետի կոչման, հանդիսականները բուռն ծափահարութեամբ ողջունեցին պ. բժշկապետին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱՄԲԵՐԻՆ ԹԻՒՐԳԻԱՅԻ ՄԱՍԻՆ

II

Ընդհանուր կերպով քննելով թիւրքական բարենորոգումների հարցը, խօսելով այդ հարցի վերաբերյալ համեմատում է իշխող դասակարգի մասերը հորիզոն աշխատ և յիսուն տարի առաջ: Նա դուրս է բերում այն եզրակացութիւնը, թէ այդ դասակարգը մեծ փո-

փոխութեան է ենթարկվել, զգալի առաջադիմութիւն է արել:

Առաջ չափազանց սակաւթիւ էին իրանց մայրենի երկրի պատմութիւնը, աշխարհագրութիւնը, օտար լեզուներ ու գրականութիւն իմացող թիւերը: Բոլորն էլ մեծ աւելում էին որ Եւրոպայից էր գալիս, ինչ որ քրիստոնեայ անուան հետ էր կապված: Շատերի համար եւրոպական մի որ և է երկրում գեղական լինելը հաւասար էր աքսորանքի պատժին: Մեծագույն շրջան հաջելը կրօնական յանցանք էր համարվում: Մեծագույնների հետ յարաբերութիւն պահպանելը, նրանց լեզուններն ու գրականութիւնը սովորելը նշանակում էր Ղուրանի պատուէրին հակառակ գնալ: Ժողովրդի կրթութիւնը ամենայնպէս զրուծեան մէջ էր: Արական սեռը աչքի էր ընկնում իր աղքատութեամբ ու կոպտութեամբ, իսկ իգական սեռի համար բոլորովին դարձնելը չէր կախնա թիւրք կնոջ ձգտումը ղեկի կրթութիւն հաւասար էր անառակութեան մոտենալուն:

Այդպէս էր յիսուն տարի առաջ: Իսկ այժմ բոլորովին այլ պատկեր է ներկայանում մեր առաջ: Ժամանակը կատարել է իր բարենորոգչի գիշ գործը: Այժմ Թիւրքիայում անգլագետների թիւն աւելի քիչ է, քան թէ արեւելեան միւս ազգերի մէջ: Տարրական, միջնակարգ և նոյն իսկ բարձր կրթութիւնը մասնին է ոչ միայն արական, այլ և իգական սեռի համար: Թիւրքերն այժմ ուսումնասիրում են սովորում են եւրոպական լեզուներ և գիտութիւն, աշխատում են մշակել իրանց մայրենի լեզուն ու գրականութիւնը: Մի խօսքով կանգնած են առաջադիմութեան ճանապարհի վրա:

Սակայն այդ առաջադիմութիւնը գրեթէ միմիայն կրթական ասպարէզով է արտայայտվել, առանց ազդելու տնտեսական-սոցիալական կեանքի վրա: Ներկայումս Թիւրքիայի ամբողջ վաճառականութիւնն ու արդիւնագործութիւնը կենսաբանացած է քրիստոնեաների ձեռքում: Թիւրքերը մեծ արհեստներով են նայում գործունէութեան այդ ասպարէզների վրա: Ներանց համար ամենամեծ գրաւորութիւնը ներկայացնում են պետական պաշտօնները: Այդպիսի սխալ հայեցակէտն առաջ է եկել նրանից, որ Թիւրքերը հինգ սկզբից եղել են իշխող տարր, ապրել են ուրիշների հաշուով: Այդպիսի դրութիւնը կարող է փոխվել միայն երկար ժամանակի ընթացքում, կամաց-կամաց, եթէ օրէնքով հաստատվի բոլոր հպատակների իրաւունքների հաւասարութիւնը: առանց կրօնի կամ ազգի խտրութեան, եթէ ամենքի մէջ զարգանայ անհատական ազատութեան զգացմունքը:

Բայց ինչն է պատճառը, որ Թիւրքերի անհատական առաջադիմութիւնը չէ ազդել երկրի սոցիալական պայմանների վրա, ինչպէս իշխանութիւնը մնացել է առաջվա նման անպէտք, ինչպէս Թիւրքերն են առաջնելով դիմում է ղեկի քաջայում: Դրա պատճառները շատ պարզ է: Եւրոպայի բոլոր չարիքների պատճառն այն է, որ բարենորոգումների հիմքը կեղծ հողի վրա է դրված, որ չեն ուղղում հասկանալ, թէ սոցիալական-կրօնական պայմանները կարող են միայն աստիճանաբար վերափոխւել: Բարեփոխվել, թէ անհրաժեշտ է կառավարութեան ձեւը համակերպել տիրող կարգերի հետ:

Անկասկած, Արդու-Համիդը չափազանց առաջադիմաւոր կառավարիչ է և ունի հազուադէպ մտաւոր յատկանքներ: Մեծագույն այն կարծիքն է, թէ նա մի բանակ է, զուրկ բարի յատկութիւններից, բայց դա սխալ կարծիք է, որի պատճառը սուլթանի կասկածամտութիւնն է և անձնական ապակովութեան մասին ունեցած հոգատարութիւնը:

Նա իր շուրջը հաւաքել է մի շարք ճարտար գործիչներ, որոնք չանգործում են նրա վախկոտութիւնը, չոյում են փառասիրութիւնը: Այդպիսով Բիւրդ-Քիօսը շարձել է մի կենսաբան կառավարութեան մեխանիզմի համար և սուլթանը միայնակ ղեկավարել է երկրի բոլոր գործերը: Նա ոչ ոքի չէ հաւատում և իրան բաւականաչափ ուժեղ է զգում վախկոտ ղեկը միայնակ տանելու համար: Հենց դա է պատճառը, որ հասարակական գործերը հետգնեւել վառանում են, անկարգութիւններն աւելանում, երկրի տնտեսական կազմը քայքայվում: Իսկ այդ բոլորը սոցիալական միջաւանութիւն են առաջ բերել օտար պետութիւնների կողմից:

Այժմ բոլորին հետաքրքրում է այն հարցը, թէ արդեօք մի օր և է օգուտ կարող են տալ մակեդոնական բարենորոգումները:

Մի օր և է չարական հետեւների հասնելու համար անհրաժեշտ է, որ Թիւրք կառավարու-

թիւն ինքնակամ կերպով իրականացնէ բարենորոգումները, աչքի առաջ ունենալով ազգաբնակչութեան ցեղային և կրօնական տարբերութիւնը: Բացի դրանից, հարկաւոր են և նիւթական միջոցներ, կան, արդեօք, այդ պայմանները, այդ միջոցները: Ոչ, ինչպէս երեւում է, ինքը Արդու-Համիդը չէ ուզում, որ բարենորոգումները չուտով իրականանան, որովհետեւ նա վախենում է, թէ քրիստոնեաները կօզմեն նոր կարգերից իրանց յեղափոխական նպատակները առաջ տանելու համար: Բարենորոգումների խնդրում սուլթանը հետևում է festina lente նշանաբանին:

Բարենորոգութեան ամենապլանաւոր խոշորան այն է, որ Թիւրքերը ամբողջ դարերի ընթացքում սովորել են իշխել, սովորել են աւել ու արհամարհել քրիստոնեաներին: Նրանք սարսափ են զգում, երբ խօսք է լինում իրաւունքների հաւասարութեան մասին: Շատերը Բալկանեան թերակղզու քրիստոնեայ երկրներէից գաղթել են Փոքր-Ասիա, աւելի լաւ համարելով մեծնել այնտեղ, քան թէ հպատակվել քրիստոնեայ թեմիսին, հաւատարմել «գետեր» ներքո հետ:

Բացի դրանից կայ և մի ուրիշ արգելք: Դա նիւթական պակասութիւնն է: Թիւրքերն միշտ չունեն նոյն իսկ իր ընթացիկ ծախսերը հոգալու, ուրեմն ինչպէս կարող է աւելորդ գումարներ յատկացնել գաւառական իշխանութիւնը վերակազմելու համար:

Այդպիսի դաւն կարծիքներ յայտնելուց յետոյ, Թիւրքաւոր Վամբերին իր յօդուածը եզրափակում է հետեւեալ խօսքերով:

«Բարենորոգումները ոչ մի աղոյրութիւն չեն կարող ունենալ: Ինձ թւում է, թէ դա մի կարճ ժամանակամիջոց է, որպէս զի դահիճը մի կերպ անցկացնէ ճգնաժամը և մի յարմար օրակէի սպասէ իր հարուածը հասցնելու համար, եթէ ամբողջ օրգանիզմը հիւանդ է և անմիջական օգնութիւն է պահանջում բժշկից, անմիջականութեամբ օգուտ սպասել միայն մի անգամ: Երբ քրիստոնեայ իշխանութիւնը կարող է քրիստոնեայ իշխանութեան կարգը վերակազմելու համար, իսկ վերաքննել արեւելեան հարցը ներկայ պայմաններում: Կը նշանակէ նորից սկսել Օսմանեան կայսրութեան անդամահատութիւնը: Բաժանւած մանկան անհետ, հնար եղած չափով քիչ զոհեր տալով, քիչ ցաւ պատճառելով...»

Շատ ճիշդ է Թիւրքական իրականութիւնը լաւ ճանաչող պրոֆեսորի այդ կարծիքը: Բայց ակներև է, որ եւրոպական պետութիւններից ոչ մէկը չէ ուզում վերաբուծի դեր կատարել Թիւրքիայի վերաբնութման, չէ ուզում անդամահատել նրան, որովհետեւ այդ քայլը կապված է շատ մեծ վտանգների հետ:

Ե. Բ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆ

«Մեզ հաղորդում են Բերնից, որ XII համաշխարհային խաղաղութեան կոնգրեսը գումարվելու է այս տարի սեպտեմբերի 12-ին (ն. ա.) Շալլիդիայի Հաագա քաղաքում:

«Իտալիայում տեղի են ունենում հակառակադիմա ցոյցեր: Վենետիկում ամբողջ մի ցոյց կազմակերպեց անտրիական հեղափոխական անալի: Պիզա քաղաքում և Բոլոնիայում կազմակերպեցին միտինգ, որ ընդարկեց մի վճիռ ընդդէմ դաշնակցութեան Առաքելայի հետ: Կոմունը ամբողջ այրեց անտրիական դրօշակը: Փարիզայում արձանի առաջ, Լրագիրները և հասարակական կարծիքը համակրութիւն են արտայայտում ցոյց անողներին: Նոյն իսկ կառավարչական լրագիր «Capitale» տալով է. «Թէն ոչ ոք Իտալիայում չէ ցանկաւորում պատերազմ Առաքելայի հետ, բայց իսկական և հաստատ բարեկամութիւն հնարաւոր կը լինի երկու երկրների մէջ միայն այն ժամանակ, երբ կիրառուվի բնաստեղծի տեւանքը: Թող նրանք, անտրիականները, քաղվեն Ալպերի այն կողմը և մենք կը դառնանք եզրայինը»:

«Բոլաբիայի նոր միջնորդ-նախագահ Պետկովը գերմանական մի լրագրի թղթակցի հետ խօսելով, ասաց, որ այժման միջնորդութիւնը «ազգայնական» բնույթով չէ: Պետկով յայտնեց, որ ինքն, որպէս, ուրիշ որ և է բոլաբիական աւելի հակառակորդ է Ռուսաստանին, բայց նա ամենից առաջ լաւ զգարացի է: Մակեդոնական շարժումը իր ներկայ ֆալիսի մէջ նա նկատում է իբրեւ հետեւանք այն սխալները, որ գործեց նախկին միջնորդութիւնը: Նոր կարիները պէտք է աշխատէ պահպանելով բարի յարաբերութիւններ Թիւրքիայի հետ, ձեռք բերել զանազան զինվորական թիւթեղութիւններ: Մակեդոնական ժողովրդի համար նա արգէն դիմել է Բ. Դրան, խնդրելով դադարեցնել Մակեդոնիայում բոլաբիների հալածանքը:

«Յայտնի գրող Գ. Բրանդէս վերջերս կար-

գաց երկու նշանաւոր դասախօսութիւն Պարիզի առաջ բարձր դպրոցում: Դասախօսութիւններից մէկը նուիրված էր Իբսէնին, իսկ միւսը կրում էր այս վերնագիրը՝ «Դեռ թէն և ազատութեան գաղափարը»: Բրանդէսը բնորոշեց Իբսէնին իբրեւ գրող և մարդ, ծանօթ լինելով նրա հետ ամբողջ 37 տարի: Իբսէն իր արտագրութիւնների մէջ գլխաւորապէս հետաքրքրվում է բարոյական յատկութեան հարցերով և բոլոր նրա գործող անձինքը, չը նայելով իրանց բնաւորութեան և տեմպերամենտի տարբերութեան, այս և այն ձևով կուռն են յանուն հասարակական բարոյականութեան և արդարութեան: Պետկով մասին դասախօսութեան մէջ Բրանդէսը բարոյական նրա ասուքը և բարոյական զարգացման ընթացքը, նրա քաղաքական, հասարակական և կրօնական հասկացքների փոփոխութիւնը:

«L'Europeen» լրագիրը հաղորդում է, որ Պարիզում գրական կրթական ընկերութիւնը մի բանկէտ կազմակերպեց ի պատիւ Գ. Բրանդէսի: Բանկէտին ներկայ էին Փրանսիայի և օտարազգի գրողների մի ամբողջ խումբ, որոնք եկել էին իրանց յարգանքը մատուցանելու Վերապահ գրականութեան մեծ հասանքներին: Գրքի հեղինակին ի թիւս այրոց ներկայ էին պ. պ. Գաստոն Դրան, Կովալիսկի, Գր. Բորեստի, պրոֆեսոր Դամարով, իշխան Կարաշօրովիչ, Փամաշիան, Մանսոն, Օգուստ Թիէրի, Պիէր Բիլառ, Չերակով, իշխան և իշխանուհի Երիսով, իշխանուհի Տրուբեցկոյ, պ. և տիկին Մուրմյէր և այլք: Գաստոն Դրան բաժակ առաջարկեց յանուն Փրանսիական կրթականի. պ. Մեյսոնյէլ ճշեց Բրանդէսի գործի կարեւորութիւնը: Մարան խօսեց յանուն Դանիայի և բանաստեղծ Արչալ Չորանիան յանուն Հայաստանի, Տիկին Սեվէրին սքանչելի ողբաւորութեամբ խօսեց և նրա ճարտ աշակերտ Դամարովի: Թիւրքերն առաջ բերեց Բրանդէս պատանանց մի ճառով, որի մէջ մատնացոյց արեց կրթական կատարած դերը և կամեցաւ ասել, թէ Փրանսիական կրթական աշխարհի ամենատաղիքն է:

«ՄՇԱԿԻ» ՀՅՈՒՄՈՐԻՍՏԻՆ

ՌՈՒՍԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

19 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ: Յրանսիական պատուիրական անդամները յօդուածներ տպագրեցին Բագաւոր Կայսրի և Թագուհի Կայսրուհու կողմից: Չնայելով մատուցեց Նոյն Կայսրական Մեծութիւններին Պարիզի տնտեսի մի գեղեցիկ արձանի, որ ներկայացնում է Միքէլանջի, որպէս նշան զինաւորված խաղաղութեան:

Կ. ՊՈԼԻՍ, Ռուսաց և աստրո-ուսագրական դեպարտմենտը պահանջում են Բ. Դանից միմիայն ընկերութեան կատարել Սմերգէն գեղեցիկ աւելորդ և Զիւլապտեան անդամները հաղորդաբար իրականութեան համեմատ, բայց իրաւունքները միայն զօրքերի հետ և, բացի ապառաժներից, ինչպէս ասում են, սպանեցին 200 մարդ, այն ինչ Բ. Դրան գեղեցիկներին համեմատ, ընդամենը սպանված են 80 հոգի:

ԱՌՅԻՍ: Իշխանի անուանակոչութիւնը տօնվեց մողթանքով, որից յետոյ կատարվեց հոգեհանգիստ Մակեդոնիայում սպանված ապստամբների պարագլուխների համար:

Կ. Պարիզ ստացված տեղեկութիւնների համեմատ, բոլաբիական գործակալութիւնը առաջադրութիւն արեց բոլաբիների խնդրական կայանաւորութիւնները և աքսորները դադարեցնելու մասին: Ռուսաց և աստրո-ուսագրական դեպարտմենտների պաշտպանութեան շնորհիւ, Բ. Դուռը դադարեցնեց Փոքր-Ասիա քաղաքներին մի ամբողջ խմբի ուղարկումը: Հաստատում են, որ Թիւրքաց իշխանութիւնները կարգադրութիւն արեցին օտարականացի վրա գտնվող գեղերի բոլաբար ազգաբնակչութիւնը Մակեդոնիայի ներքո գաղթեցնելու մասին:

ՐՈՒՐԳԱՍ: Նաւահանգիստը բանալու համար կատարելապէս աղոյրվեց:

ԱՍՏՐԱԿԱՆ: Կայսրաւ Առաքելայի թեմի երեք հարիւրամեակի տօնախմբութիւնը:

ՍԱՅՊՈՒ: Գնեւար-նահանգապետ Բո, որը սպանվում էր Սայգոնում, ստիպվեց կանգ առնել Տօնկինում իւնիանից ստացված նշանաւոր տեղեկութիւնների պատճառով: Ապստամբութիւնը բռնել է երկիրը մինչև Տօնկինեան օտարները 200 Փրանսիացիներ պաշարված են իւնիանիքում և Մեյնգիում: Երկրաւորական աշխատանքները ընդհատված են:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ: Անհատականների ժողովարանի զանիւնում կայացաւ հանդիսաւոր նիստ անտառային ինստիտուտի հարիւրամեակի առթիւ: Երկրագործութեան միջնորդները ներկայութեամբ կարգադրեց Բարձրագոյն հրովարտակ, որով շնորհվում է ինստիտուտին «Լ»:

տերբորգի Կայսերական անտառային ինստի-
տուտին կոչումը:
Բալտիկական երկաթուղիով ճանապարհ ըն-
կառ Մեծ Իշխան Վլադիմիր Ալեքսանդրովիչը

20 մայիսի
ՍՕՅՈՒՆ Հակառակ կառավարության ջան-
քերին լաւ յարաբերութիւններէ մէջ լինել Բ.
Դրան հետ, հաղորդում են երկրաշարժի դրու-
թեան մասին սահմանի վրա, ուր կենտ-
րոնացնուի են թիւ բազմակիս զորքերը:
Իշխանը ճանապարհ է ընկնում արտասահ-
ման:

Կ. ՊՈԼԻՍ. Անհիմն է այն տեղեկութիւնը,
որ իբր թէ Ջէմիլ-փաշային մտադրութիւն
կայ նահանգապետ նշանակել երեք քրիստո-
նայ վիլայէթներում:

Տէրմորգի Զէրնոգորայում մտքոված է ծը-
խախտի մենապաճառութիւն Կոնցէսիան տըր-
ված է վեներական տեղեկութեան ընկերու-
թեան 15 տարով: Գործունէութիւնը կը սկսվի
1904 թւին:

Եւրոպայի ԱՆԿՍՏԱՆԴՐՈՒԹՅԱՆ
Հրատարակչութիւնը ՔԱՐՏՈՒՆԻ ՏԻՊՈԳՐԱՖԻԱ
ԻՍՏԱՆԱՍ ՄԻԼԻՏԱՆՍԿԱՆՍԿԱՆ

ՅԱՅՑԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բ Ժ Ի Շ Կ

ԼԷՎԱՆ ԻԿԱՆՈՎԻՉ ԲԱՄՈՅՆԱՆՑ

Ուղեորինք Պետերբուրգի Ընդունվում են մէջի,
սեռական օրգանները և սիֆիլիս հիւանդու-
թիւններ ունեցողները:

3—3

ԳԻՇԵՐՈՐԹԻԿ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

ՕՐԻՈՐԴԵՆԻԻ ՀԱՄԱՐ
(Գրգռմանական դասընթացը)

Ս. Վ. ԵՐԿԱՅՆԱՐԱԶՈՒԿ-ԱՐ- ՂՈՒԹԵԱՆԻ

Ամառը կուղեորով Արաթուման և կընդունէ
օրերը, որպէս գիշերօթիկ:

4—4

ՊԱՏՐԱՍ Է

ապագրութեան համար
ՀԱՅ ԲԱՄՈՅՆԱՆՑ ԱՊՐԱՅՆ ՈՒՍՈՒՄ-
ՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ:

աշխատութիւնը, բաղկացած երկու մասից:
Մասն Ա.—Թարգմանի օգնականութիւնն ու
նրա զարգացումը ուսանողների մէջ, օգնելից
մինչև 1879 թ. և Մասն Բ.—միջան Նապո-
լէոն Ամառումնու թարգմանական շրջանը 1879—
1883 թ.:

Հրատարակում ենք ձեռնարկ անձանց հրատա-
րակելու:

Պայմանների մասին գիտել թիֆլիս, Ներսի-
սեան հոգևոր դպրոց, Բագրատ Տէր-Ղազար-
բեանցին:

2—3

ԱՐԱՐԻ

Շուտով լոյս կը տեսնէ

ԳԻՐԵՆԱԿԱՆ ՀԻՄՆԵՐՈՒԹԻՒՆ

(Գ օ է մ ա)

Գինը 20 կօպ.

Դիմել Թիֆլիս, Աբաս-Աբատская № 25,
Արտաշես Աբալանց, կամ Կենտրոնական
գրականատանը:

3—3

Բ Ժ Ի Շ Կ Ա Ս Ե Տ

ՎԱՅԱՆ ԱՐԺՐՈՒՆԻՆ

Նախկին տարիների նման, մայիսի 15-ից ըն-
դունում է հիւանդներին Կովկասեան հանքա-
լին ջրերում:

Հասցէն. Пятигорскъ, Верхній Бульваръ,
д. Султанъ-Гирея.

4—10

ՀԱՐԱՐԱՆԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՊԱՐՄԻՅ ԽՈՅԻ

ՉԻՐՈՒՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲՈՒՇԻՐՈՒՄ

(Հիմնված 25 տարուց ի վեր)

Հաղորդում է մանրամասն տեղեկութիւններ
Պարսից ծոցի առեւտուրի մասին, ունի ներկա-
յապետներ հարաւային Պարսկաստանի նշանա-
ւոր կենտրոններում, ընդունում է յանձնարարու-
թիւններ, զննում և վաճառում է ապրանքներ,
փոխադրում է Եւրոպայից Պարսկաստան և
Պարսկաստանից Եւրոպա, գիւրամատչելի պայ-
մաններով.—Հասցէն. Zeytoon B. G. Buchter
Persian-Buff.

92—100

Իւրաքանչիւր գրասենյակի վրա պէտք է լինի
զապի միջոցով վառվող

„ՀՐԱՇՔ“

մոմը, որ ունի զօրեղ լոյս սկսած 50 մոմի
լոյսից մինչև 300 մոմի լոյսը:

Ունի արեւի լոյսի յատկութիւն. այրվում է
առանց ապակու: Իր յատկութեամբ գերազանց
է էլէկտրական լոյսից: Միանգամայն անվտանգ
է: Նրա հետ վարվելու եղանակը շատ պարզ է:
Մոմիսը մի ժամում 1 կապէկից աւելի չէ:

Գինը 3 րուբլի է:
Վ Ա Ճ Ա Ռ Վ Ո Ւ Մ Է

Կ. ԲՈՒՆԵՎԻ ՍՕՏ

Թիֆլիս. Ալեքսանդրեան այգու. հանդէպ.
Գորանդ-Ունը հիւրանոցի կողքին:

1—3

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ

Գրականութեան վաճառու Ն. Բ. ԲՈՒ-
ԴՈՒՆԵԱՆԻ աշխատութիւններից հետեւեալները.

1. Վեներական ախտեր 5 կ.
2. Մեր նեարդերը 10 կ.
3. Առողջ հոգին առողջ մարմնի մէջ 10 կ.
4. Գեղձախտ (գլխախտ) 10 կ.
5. Ո՞վ է յանցաւորը 15 կ.
6. Կարեք և բարեգործութիւն 15 կ.
7. Ժառանգականութիւն և դատարարակու-
թիւն 15 կ.
8. Մանկավարժական համառոտ զրոյցներ 15 կ.
9. Մարմնամարզութիւն (25 պատկերներով)
20 կ.
10. Առողջապահական նուէր նորատի կանանց
20 կ.
11. Ինչ է կալու հիւանդութիւնը 15 կ.
12. Երիտասարդութիւն և ծերութիւն 15 կ.
13. Առողջ և հիւանդ երեխայի ոգին 20 կ.
14. Մարմնամարզութիւն պատկերներով 10 կ.
15. Ուղեղի օրգանները (գլխի և ողնաշարի) 20 կ.
16. Ստամոքսի կառուց 20 կ.
17. Քուէն և երազ 25 կ.

(Մեծագիր պատկերը Բոնի և Երազ շքեղ
թղթի վրա 10 կ.)

ՊԱՏՐԱՍ ԵՆ ՏՊԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

1. Իրաւունք և կոնիւ:
2. Մտաւարկապաշտութիւն:
3. Բնութեան ոյժը, ինչպէս բոլիչ:
4. Նուէր հայ գինորին (պատկերազարդ):

Այս 4 գրքերից երկուսը գոյացած զուտ
արդիւնքը կուղարկվի Պարսկաստանում բացվե-
լիք ճանապարհային-Պարսկաստան գիւղատնտե-
սարկեսազարկական դպրոցին:

Դիմել Կнижный магазинъ „Гуттенбергъ“,
(Дворцовая) Тауизтаву.

1—3

ՋՀՈՒԴ-ՔՈՒՇԱՆ

Վէպ Պարսկաստանի կեանքից
Շ Ա Հ Ր Ի Ա Ր Ի

Գինը է ՄԷԿ ՐՈՒՐԻ

Մարվում է. 1) Թիֆլիսում՝ Կենտրոնական
և Գրականութեան գրականատանցներում, 2)
Բագուում՝ Գրականութեան գրականատանցներում:

1—10

Մ. ԽԱՐԱԽԱՆԵԱՆՑ

ԱԳՐՈՒՄ

Մասնագէտ գիւղատնտեսական դասաւոր
հիւղերի, ուսած Յրանսիայի Մոսկովիէ քա-
ղաքում. ևս առաւել կատարելագործած այգե-
գործական և գինեգործական մասնագիւղերը,
պաշտօն է լնդորում մասնաւոր կայաւածնե-
րում: Դիմել Մշակի խմբագրութեան:

2—5

ՄԻ ՀԱՅ ԳՐԱԾԱՐ

կանխում է վերցնել շարելու գրքեր թէ հայե-
րէն և թէ ռուսերէն, հեղինակներին ձեռնառե-
լայաններով: Հարցնել Կукі, около пам.
Воронцову, Мостовая ул., № 16, портняж-
ная мастерская „Экономія“, Գարեգին Հայր-
բաբամեանցին:

2—2

ԱՏԱՄԻ ՈՒ ԲԵՐԱՆԻ ՀԻՄՆԻՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Բ Ժ Ի Շ Կ

ԱԼ. ՄԱՅՈՒՐԵԱՆ

ՇՈՒՇՈՒՄ

սկսում է հիւանդների ընդունելութիւնը մայի-
սի 10-ից:

5—12

Շ Ղ Թ Ա Յ

Նախարարական Ընկերութեան Վարչութիւնը հրաւիրում է ընկերութեան պ.պ. բաժ-
նեւէրներին

Ա Ր Տ Ա Կ Ա Ր Գ Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ժ Ո Ղ Ո Վ Ի

որը տեղի է ունենալու կիրակի օր. սոյն յունիսի 1-ին, առաւօտեան 10 ժամին, քաղաքային
տան դահլիճում, քննելու հետեւեալ հարցերը.

- 1) Տարեկան ընդհանուր ժողովի վերաբերեալ և
- 2) Ընկերութեան մատակարար գործողութեան վերաբերեալ:

(21, 27 մ.) 1—2

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԼԱՐՈՒՏՈՐԻԱ

Գ. Փ Ա Ս Տ Ր Մ Ա Ճ Ե Ա Ն Ի

Դոկտոր քիմիական գիտութիւններ

Ընդունում է ամեն տեսակ նիւթերի և հաւն քերի անսլիզնեի (որակական և քա-
նակական):

Հանք քերի մանրամասն ուսումնասիրութիւններ և հետախուզութիւններ:
Դիմել հետեւեալ հասցէին. Докторъ Г. Пастермаджіанъ. Вельяминовская ул., 19.

ТИФЛИСЪ. 5—10

ՆԱԽ-ԱՐԴԻՆԱՐԵՐԱՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ո Ր Ո Տ Ա Ն

Այսու յայտնում է ի գիտութիւն իր փայտէրների, որ սոյն մայիսի 15-ից սկսած՝ ամեն
օր առաւօտեան 10 ժամից մինչև մէկը, կը վճարէ իր գրասենական կամ արդիւնա-
բերական առողջ ու հիմնաւոր կրթութիւն ներդաշնակութիւն և ձեռք կերպով միացած աղքատին
հիմնական դատարարակութեան հետ: Մեր հայ սաներուն կաւանդեք, և այս՝ առանց որևէ
մասն աւար վճարումի, հայոց լեզու. (առաւանջ քաղաքում), մտանա-
գրութիւն հայոց (հին և նոր), հայոց պատմութիւն և այլն: Ռուսաւայ աշակերտները կարող
են նաև ուսանել ռուսաց լեզուն:

4—4

ՀԱՅ ԾՆՈՂՆԵՐՈՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԻՇԵՐՈՐԹԻԿ ԴՊՐՈՑ

Լ Օ Ջ Ա Ն, Ջ Ո Ւ Ե Ց Ե Ր Ի Ա

Երկրորդ տարի

(16-րդ անգամից սկսեալ. ձմեռան վեցամեային դասերը կը սկսին սեպտ. 1/14-ին)

Արեւելեան կամ հայկական դպրոցը կընդունի 10-էն 20 տարեկան աշակերտներ, որոնք
կուսայ, ծնողներու բաղձաւորին համաձայն, գիտական, գրական, առեւտրական կամ արդիւնա-
բերական առողջ ու հիմնաւոր կրթութիւն ներդաշնակութիւն և ձեռք կերպով միացած աղքատին
հիմնական դատարարակութեան հետ: Մեր հայ սաներուն կաւանդեք, և այս՝ առանց որևէ
մասն աւար վճարումի, հայոց լեզու. (առաւանջ քաղաքում), մտանա-
գրութիւն հայոց (հին և նոր), հայոց պատմութիւն և այլն: Ռուսաւայ աշակերտները կարող
են նաև ուսանել ռուսաց լեզուն:

Դպրոցի տարեթուական, հակառակ իր ընտանք բաղձաւոր իրական առաւելութիւննե-
րուն, անօրինակ կերպով չափաւոր է.—Ընտանեկան կենսւք.—Դպրոցի յայտագիրը ամեն ու-
ղով կը զրկուի:

Տնօրէն՝ Մ. Նալբանդեան, դօկտ. գիտութեանը պրիվատ-դոցենտ

1) Longeraie, Lausanne, Suisse 19—27

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն Ա Ք Ե Ժ Ք Ա

Ժողային, գեղային և ցամաքային ազատագրութեան, ապրանքների տեղափոխութեան և
գործերը կրակից ազատագրելու համար:

Հիմնված է 1847 թին

Հիմնական գրամագուլիւր 1,650,000 ռուբլի
Պահեստի գրամագուլիւր 2,664,808 ,

Լ. Ա. Գ. Ր. Ա. Բ. Ե. Բ. Ի. Տ. Ն. Ա. Փ. Ո. Բ. Ի. Բ. Ի. Ե.

Աւելի քան 300 գործակալութիւններ եւրոպական Ռուսաստանի, Կովկասի, Միջին Ասիա-
յի, Սիբիրի և հեռու Արեւելքի բոլոր նշանաւոր տեղերում, նորայէս և ներկայացուցիչներ
արտասահմանի գիտութիւն քաղաքներում:

Տեղափոխութիւն ամեն տեսակ բեռների և իրերի, որոնց ընդունելութիւնը և յանձնումը
կատարվում է թէ ամբ և թէ պահեստներում ու խանութներում:

Յանձնումը բեռների ուղարկողների կողմից առաջարկված պայմաններով (վերադիր չափ-
ների և այլն ուղարկողների, դրամի փոխադրութիւն (переводъ) բեռները յանձնելու տեղը
հասցնելու համար և այլն):

Աւազանութիւն բեռների արտանալ պայմաններով առաջարկած տեղերում՝ ապահովագրե-
լով նրանց պահեստներում, որի համար շատ կէտերում կրն ընդարձակ պահեստներ, յատկապէս
բեռներ պահելու համար:

Ս. Ն Ա Ի Ա Ք Ն Ա Ց Ո Ւ Թ Ի Ն

Սեփական մարդատար, ապրանքատար և ձկն չոգնաւոր, ծովային և գետային նավեր
(70 նավ):

Քանակներ և մարդատար նավերի պարբերական կազմակերպութիւն Վոլգա գետի բոլոր
նավահանգիստների մէջ, Բիբիսիկից մինչև Աստրախան և Կասպից ծովի բոլոր նավահան-
գիստների մէջ, Աստրախանից մինչև Պարսկաստանի ափերը:

Ամենաբարձրագին պահեստներ նիւթերում (թիւրքական նուամատոյցի վրա), Աստրախա-
նում, Բագուում և Կրասնովոդսկում:

Բեռները ամբողջապաշտ և ուղարկելու համար ընկերութեան չոգնաւորացուցիչները Կա-
սպից ծովին է կապել երկաթուղիների հետ: Այն ապրանքների տեղափոխութեան համար,
որոնք ուղարկվում են Ռուսաստանից Պարսկաստան և Պարսկաստանից Ռուսաստան, դոյու-
թիւն ունի առանձին, բացառիկ արժեքներով, ևսանձայնութիւն Պարսկական ապահովագ-
րական և տեղափոխութեան ընկերութեան հետ:

Ս. Ա. Գ. Ր. Ա. Բ. Ե. Բ. Ի. Տ. Ն. Ա. Փ. Ո. Բ. Ի. Ե.

ա) Ապահովագրութիւն բեռների, որոնք տեղափոխվում են թէ ցամաքային և թէ ջրային ճանապարհ
ներով (ծովային և գետային):

բ) Ապահովագրութիւն կրակից ամեն տեսակ գործերի
գ) Ապահովագրութիւն ամեն տեսակ գործերից հանապազմի. ամեն տեսակ նավերի, շոգնա-
ւոր, առաւելագործութիւն, վազանների և վազան-ցիտների:

դ) Ապահովագրութիւն թանգարանի իրերի և արժէքաւոր իրերի, որոնք ուղարկվում են պատմի, ցա-
մաքային և ծովային ճանապարհներով, համապատասխան պայմաններով զարկելու թանգարանի մէջ:

Ապահովագրութիւն ընդունվում են ինչպէս վազաններ, այնպէս ամեն տեսակ ընկերութեան թանգարան
գործակալութիւնների մէջ:

Բացի ապահովագրութեան պարագայ գործակալութիւններից, կրակից ապահովագրելու գործերով մաս-
նաւորապէս զբաղվում են էր արդ 350 գործակալութիւններ:

Ս. Պետերբուրգի Կասպից ծովի երկրներում վարչութիւնը գտնվում է Ս. Պետերբուրգում, Ապրիլայէրիկի,
պրոպէկտի վրա, № 10-րդ փողոց:
Կազմակերպութիւն չոգնաւորացուցիչների համար՝ Բագուում, Գետային չոգնաւորացուցիչների հա-
մար՝ Նիժնի-Նովոգորոմ:

Թիֆլիսի գործակալութիւնը—Դոգրովայա փողոցի վրա, վրաց աշխատանքների տանը: Զեկեթի № 106
(հ. ա. հ.) 79—120